Վ Ճ Ռ Ե Ց

«Սյունիք» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի՝ թիվ ԱՄԱՀ-ԱՊՄ-ԳՀԱԾՁԲ-22/39 և թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱԾՁԲ-22/39-1 պայմանագրերով նախատեսված աշխատանքներն ընդունելու համար հանձնաժողով ձևավորելուն պարտավորեցնելու, թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱԾՁԲ-22/39-1 պայմանագրով նախատեսված աշխատանքների գումարը և դրա նկատմամբ հաշվարկվող տույժը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել՝ մասնակի։

Պարտավորեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքին ձևավորել ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով՝ թիվ ԱՄԱՀ-ԱՊՄ-ԳՀԱԾՁԲ-22/39 պայմանագրով նախատեսված աշխատանքներն ընդունելու համար։

Հայցը մնացած մասերով մերժել։

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքից հօգուտ «Սյունիք» ՍՊ ընկերության բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար։

Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված։

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում։

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին։

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEF8-0030-4366-936A հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am